

4466

ЗКП
Г-11

17 SEP 2017

20 NOV 2009

11 JUL 2005

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՓԵՆԵՐԱՏԻ ԽՈՐՀՐԴՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

300
1335-ԾՐ
340
Ը-11

18

Պրոլետարներ իզդր երկրների, միացեք.

ա. 3
հ.

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՕՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ (ԲՕԼՇԵՎԻԿՆԵՐԻ)

Ծ Ր Ա Գ Ի Ր Ը

(Ընդունած կուսակցության 8-րդ համագումարում՝ 1919 թ.
մարտի 13—23-ը).

Թարգ. Գ. ՀԱՅԳՈՐԻՆԻ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՆԱՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՐԵՏ
ՄՕՍԿՎԱ—1920

41835

Հոկտեմբերեան լեղափոխութիւնը (25 հոկտ., 7 նոյեմբ., 1917 թ.) Ռուսաստանում իրագործեց պրօլետարիատի դիկտատուրան, որը չքաւոր գիւղացիութեան կամ կիսապրօլետարիատի աջակցութիւնով սկսել է կոմունիստական հասարակութեան հիմունքները ստեղծագործել: Յեղափոխութեան զարգացման ընթացքը Գերմանիայում և Աւստրո-Վէնգրիայում, պրօլետարիատի լեղափոխական շարժման առումը բոլոր առաջաւոր երկրներում, այդ շարժման խորհրդային ծեփ տարածումը, այսինքն այն ծեփ, որը ուղղւած է անյրէպ դէպի պրօլետարիատի գերիշխանութեան իրագործումը, այս ամենը ցոյց տւին, որ սկսել է համաշխարհային պրօլետարական, կոմունիստական լեղափոխութեան դարաշրջանը:

Այս լեղափոխութիւնը կապիտալիզմի զարգացման անխուսափելի հետեանքը համընթացաւ, կապիտալիզմի, որը առաջիկ տիրապետում է քաղաքակիրթ երկրների մեծամասնութեան մէջ: Մեր հին ծրագիրը, եթէ հաշւենք կուսակցութեան անհամապատասխան սօցիալ-դէմօկրատական անուէր, կապիտալիզմի և բուրժուական հասարակութեան բնութիւնը և հետեանք թէգիտներով:

«Այդպիսի հասարակութեան զլխաւոր յատկանիշն է կադմում ապրանքային արտադրութիւնը, հիմնւած կապիտալիստական արտադրական յարաբերութիւնների վրա, որոնց շնորհիւ արտադրութեան միջոցների և ապրանքների շրջանառութեան ամենակարեւոր և նշանակալից մասը պատկանում է իր անձերով փոքրաքանակ դասակարգին, իսկ միջնդեռ ազգայնա-



չութեան հսկայական մեծամասնութիւնը կազմւած է պրօլէտարներէից և կիսապրօլէտարներէից, որոնք, իրենց անտեսական դրութիւնից ստիպւած, շարունակ կամ պարբերաբար ծախում են իրենց բանւորական ուժը, մտնում են կապիտալիստներին մօտ որպէս վարձկան և իրենց աշխատանքով հասարակութեան վերին դասակարգերին համար եկամուտ են ստեղծում:

«Կապիտալիստական արտադրական յարաբերութիւնների տիրապետութեան շրջանը աւելի և աւելի ընդարձակւում է այն չափով, որչափ տէխնիկայի մշտական կատարելագործումը, բարձրացնելով խոշոր ձեռնարկութիւնների անտեսական նշանակութիւնը, դուրս է մղում մանր, ինքնուրույն ձեռնարկողներին, նրանց մի մասը պրօլէտարներ դարձնելով, մնացածների դերը սահմանափակելով հասարակական-անտեսական կեանքում և տեղ-տեղ աւելի կամ պակաս լիակատար, աւելի կամ պակաս բացօթյա, աւելի կամ պակաս ծանր կախման մէջ դնելով նրանց կապիտալից:

«Բացի այդ, հէնց նոյն տէխնիքական պրօգրէսը հնարաւորութիւն է տալիս ձեռնարկողներին ապրանքների արտադրութեան և շրջանառութեան պրօցէսում աւելի քան մեծ չափերով գործադրել կանանց և երեխաների աշխատանքը: Եւ որովհետեւ, միւս կողմից, նա առաջ է բերում բանւորական կենդանի աշխատանքի վերաբերմամբ ձեռնարկողների պահանջի յարաբերական նւազումը, ապա բանւորական ուժի համար եղած պահանջը անհրաժեշտօրէն լիտ է մնում նրա առաջարկից, որի հետեւանքով վարձու աշխատանքի կախումը կապիտալից աւելանում է և նրա շահագործման մակարդակը բարձրանում:

«Իրերի ալտայիսի դրութիւնը բուրժուական երկրների ներսում և մշտապէս սրւող նրանց փոխադարձ մրցութիւնը համաշխարհային շուկայում աւելի ու աւելի՝ ևս դժւարացնում են այն ապրանքների սպառումը, որոնք արտադրւում են անդադար աճող քանակով: Գերարտադրութիւնը, որ երևան է զալիս աւելի կամ պակաս սուր արդիւնագործական կրիզիսների մէջ, որին հետեւում են արդիւնագործական լնացման աւելի կամ պակաս երկարատեւ ժամանակաշրջաններ, ներկայաց-

նում է իրենից բուրժուական հասարակութեան մէջ արտադրական ուժերի զարգացման անխուսափելի հետեւանքը: Կրիզիսները և արդիւնագործական լնացման ժամանակաշրջանները, իրենց հերթին, աւելի ևս քայքայում են մանր արդիւնաբերողներին, աւելի ևս ուժեղացնում վարձու աշխատանքի կախումը կապիտալից, աւելի ևս արագ տանում են դէպի բանւոր դասակարգի դրութեան յարաբերական, իսկ երբեմն էլ դէպի քայքայումի վատթարացումը:

Այսպիսով տէխնիկայի կատարելագործումը, որ աշխատանքի արտադրողականութեան աւելացումն և հասարակական հարստութեան անումն է նշանակում, բուրժուական հասարակութեան մէջ պայմանաւորւում է՝ հատարական անհաւասարութեան ծաւալումով, ունեւորների և չունեւորների միջև եղած տարածութեան լայնացումով, և աշխատաւոր մասսաների աւելի ևս լայն խաւերի համար ապրուստի անապահովութեան, անգործութեան և ամեն տեսակ զրկանքների շատացումով:

«Ասկայն այն չափ, որչափ աճում ու զարգանում են բուրժուական հասարակութեան յատուկ այս բոլոր հակասութիւնները, աճում է նոյնպէս աշխատաւոր և հարստահարող մասսայի դժգոհութիւնը՝ գոյութիւն ունեցող իրաւակարգի դէմ, աճում է պրօլէտարիատի թիւն ու կուռ միութիւնը և սրւում նրանց պայքարը իրենց շահագործողների դէմ: Միևնոյն ժամանակ տէխնիկայի կատարելագործումը, կենտրոնացնելով արտադրութեան և շրջանառութեան միջոցները և համայնացնելով աշխատանքի պրօցէսը կապիտալիստական ձեռնարկութիւնների մէջ, էլ աւելի արագ ու արագ նիւթական հնարաւորութիւն է ստեղծում կապիտալիստական արտադրական յարաբերութիւնները փոխարինելու կոմունիստականով, այսինքն՝ այն սօցիալական չեղափոխութեան, որը միջազգային կոմունիստական կուսակցութեան, որպէս դասակարգային շարժման գիտակից արտայայտչի, ամբողջ գործունէութեան վերջնական նպատակն է կազմում:

«Փոխարինելով արտադրութեան և շրջանառութեան միջոցների մասնաւոր սեփականութիւնը հասարակականի և մշտ-

ցնեցով հասարակական-արտադրողական պրօցէսի պլանօմէր կազմակերպութիւնը՝ հասարակութեան բոլոր անդամների բարեկեցութիւնն ու բազմակողմանի զարգացումը ապահովելու համար, պրօլէտարիատի սօցիալական յեղափոխութիւնը կոչնչացնի հասարակութեան դասակարգերի բաժանելը և զբանով կազատագրի ամբողջ ճնշւած մարդկութիւնը, որովհետեւ վերջ կտա հասարակութեան մի մասը միւսի կողմից շահագործւելու բոլոր տեսակներին:

«Այս սօցիալական յեղափոխութեան անհրաժեշտ պայմանը կազմում է պրօլէտարիատի դիկտատուրան, այսինքն պրօլէտարիատի կողմից այնպիսի քաղաքական իշխանութեան նւաճումը, որ թօյլ կտա նրան ճնշելու շահագործողների ամեն մի դիմադրութիւն: Միջազգային կօմունիստական կուսակցութիւնը, նպատակ դնելով իրեն՝ ընդունակ դարձնել պրօլէտարիատին իր մեծ պատմական միսսիան իրագործելու, կազմակերպում է նրան որպէս ինքնուրոյն քաղաքական կուսակցութիւն, բոլոր բուրժուական կուսակցութիւններին հակադիր, ղեկավարում է նրա դասակարգային կռիւ բոլոր արտապայտութիւնները, մերկացնում նրա առաջ՝ հարստահարողների շահերի անհաշտ հակամարտութիւնը հարստահարողների շահերի դէմ, և պարզաբանում է նրան գալիք սօցիալական յեղափոխութեան պատմական նշանակութիւնն ու անհրաժեշտ պայմանները: Իրա հետ միասին նա բոլոր մնացած աշխատաւոր և հարստահարող մասսաների առջև հրապարակ է հանում կապիտալիստական հասարակութեան մէջ նրանց անյուս կացութիւնը և սօցիալական յեղափոխութեան անհրաժեշտութիւնը՝ կապիտալի ճնշումից իրենց սեփական ազատագրման օգտին: Բանւոր դասակարգի կուսակցութիւն, Կօմունիստական կուսակցութիւնը իր շարքերն է կանչում աշխատաւոր ու շահագործւող ազգաբնակչութեան բոլոր խաւերին, որչափով նրանք ընդունում են պրօլէտարիատի տեսակէտը:»

Կապիտալի կօնցէնտրացիայի և կէնտրօնացման պրօցէսը, ոչնչացնելով ազատ մրցութիւնը, քսաներորդ դարու սկզբում ստեղծեց կապիտալիստների զօրեղ մօնօպօլիստական միութիւն-

ներ՝ սինդիկատները, կարտէլները, տրէստները, որոնք վնասկան նշանակութիւն ստացան ամբողջ տնտեսական կենտրոն. բանկային կապիտալը ձուլեց վիթխարի չափերով համակենտրօնացած արդիւնագործական կապիտալի հետ, և առաջ բերեց կապիտալի խոշոր արտահանութիւնը դէպի օտար երկրներ: Տրէստները, իրենց մէջ առնելով կապիտալիստական պետութիւնների ամբողջ խմբակներ, յիսեցին տնտեսապէս բաժանել աշխարհը, որ տէրրիաօրիապէս արդէն բաժանւած էր ամենահարուստ երկրների միջև: Փինանսական կապիտալի այս դարաշրջանը, որ անխուսափելիօրէն սրում է կռիւը կապիտալիստական պետութիւնների միջև, իմպէրիալիզմի դարաշրջանն է:

Այստեղից անխուսափելիօրէն առաջ են դալիս իմպէրիալիստական պատերազմները, պատերազմներ՝ սպառման շուկաներ, կապիտալը դործադրելու համար ազդեցութեան շրջաններ, հում նիւթեր և բանութեան ուժ ձեռք բերելու, այսինքն՝ համաշխարհային տիրապետութեան և մանր ու թօյլ ժողովուրդների վրա իշխելու համար: Հէնց այդպէս է 1914-1918 թւականների առաջին մեծ իմպէրիալիստական պատերազմը:

Եւ համաշխարհային կապիտալիզմի զարգացման արտակարգ բարձր աստիճանն ընդհանրապէս. և՛ ազատ մրցութեան փոխարինումը պետական-մօնօպօլիստական կապիտալիզմով. և՛ բանկերի, այլև կապիտալիստական միութիւնների կողմից ապարատ պատրաստելը՝ արտադրութեան պրօցէսի ու միջերջների բաշխման հասարակական կարգաւորումի համար. և՛ կապիտալիստական մօնօպօլիստների անման հետ կապ ունեցող թանկութեան ու բանւոր դասակարգի վրա իջած սինդիկատների ճնշման աճումը, իմպէրիալիստական պետութիւնների կողմից բանւոր դասակարգի ճորտացումը, պրօլէտարիատի տրնտեսական և քաղաքական կռիւ հսկայական դժւարութիւնը, և՛ իմպէրիալիստական պատերազմի ծնած տարսախները, թրշւառութիւնները, աւերածութիւնը, այս ամենը անխուսափելի են դարձրել կապիտալիզմի կրախն ու դէպի հասարակական տնտեսութեան բարձրագոյն եղանակին փոխանցումը:

Իմպերիալիստական պատերազմը չէր կարող վերջանալ ոչ միայն ճշմարիտ խաղաղութիւնով, այլև ընդհանրապէս բուրժուական կառավարութիւնների կողմից քիչ թէ շատ կայուն հաշտութեան կնքումով: Նա, կապիտալիզմի զարգացման վերջին աստիճանի վրա, անխուսափելիորէն վերածւեց ու վերածւում է մեր աչքերի առաջ շահագործող աշխատաւոր մասսաների քաղաքացիական կռիւն, պրօլետարիատի զլխաւորութեամբ, բուրժուազիայի դէմ ուղղւած:

Պրօլետարիատի ծաւալող զրոհը և յատկապէս նրա յաղթանակները առանձին երկրներում սաստկացնում են շահագործողների դիմադրութիւնը և առաջ բերում նրանց կողմից կապիտալիստների միջազգային միութեան նոր ձևերի ստեղծագործումը (Ազգութիւնների կիզա և այլն) որոնք, համաշխարհային մասշտաբով երկրազնդի բոլոր ժողովրդների սխտէմատիկ հարստահարումը կազմակերպելով, իրենց մօտակա ճիգերը ուղղում են՝ բոլոր երկրների պրօլետարիատի լեզուաբանական շարժումները անմիջականորէն ճնշելու համար:

Այդ ամենը անխուսափելիորէն առաջ են բերում առանձին պետութիւնների ներսում քաղաքացիական կռիւների ներդաշնակ միացումը՝ այն լեզուաբանական պատերազմների հետ, որ մղում են՝ ինչպէս որ պաշտպանող պրօլետարական երկրները, այնպէս էլ հարստահարող ժողովրդները՝ իմպերիալիստական պետութիւնների լծի դէմ:

Այդպիսի պայմաններում պացիֆիզմի, կապիտալիզմի մէջ միջազգային զինաթափման, միջնորդ դատարանների և այլն լողունքները հանդիսանում են ոչ միայն չեղարկման ուտօպիաներ, այլև ուղղւած են միանգամայն մոլորեցնելու աշխատաւորներին, զինաթափ անելու համար պրօլետարիատին և շեղելու նրան՝ իր շահագործողներին զինաթափելու անմիջական նպատակից:

Միայն պրօլետարական, կոմունիստական լեզուաբանութիւնը կարող է հանել մարդկութիւնը այն տուպիկից, որ ստեղծել են իմպերիալիզմն ու իմպերիալիստական պատերազմները: Ինչպէս էլ որ լինին՝ լեզուաբանութեան դժւարութիւն-

ներն ու նրա հնարաւոր անցողակի անյաշտութիւնները, կամ հակալեզուաբանութեան ալիքները, պրօլետարիատի վերջնական յաղթանակը անխուսափելի է:

Համաշխարհային պրօլետարական լեզուաբանութեան այս յաղթանակը պահանջում է՝ առաջաւոր երկրներում բանաւոր դասակարգի լեզուաբանական գործողութիւնների լիակատար վստահութիւնը, ամենասերտ եղբայրական դաշնակցութիւնն ու հնարաւոր եղածին չափ մեծ համերաշխութիւնը:

Այս պայմաններն անիրագործելի են առանց սկզբունքային վնասի խղճան ու անխնա կռիւ՝ սօցիալիզմի այն բուրժուական խեղաթիւրման դէմ, որ յաղթանակ է տարել պաշտօնական սօցիալ-դեմօկրատական և սօցիալիստական կուսակցութիւնների վերին խաւերում:

Այդպիսի խեղաթիւրումն է հանդիսանում, մի կողմից, օպորտունիզմի և սօցիալ-զօվինիզմի, խօսքով՝ սօցիալիստական, գործով՝ շօվինիստական, հոսանքը, իր ազդային բուրժուազիայի կողոպտանէ՝ շահերի պաշտպանութեան քօղարկումը՝ հայրենիքի պաշտպանութեան կեղծ ու պատիր լողունգով, ինչպէս որ ընդհանրապէս, այնպէս էլ յատկապէս 1914-1918թւականների իմպերիալիստական պատերազմի ժամանակ: Այդ հոսանքը ստեղծւած է այն իմաստով, որ առաջաւոր կապիտալիստական պետութիւնները, կողոպտելով զաղութային ու թույլ ժողովուրդներին, հնարաւորութիւն են տալիս բուրժուազիային, այդ կողոպուտով մեծ քանակութեամբ յաւելեալ շահի հաշւին, արտօնեալ փնակի մէջ դնել ու ալգաթիսով կաշաւել պրօլետարիատի վերին խաւերը, խաղաղ ժամանակներում ապահովել նրանց տանելի մեղհանական գոյութիւնը և այդ խաւի առաջնորդներին իր մօտ ծառայութեան վերցնել: Օպորտունիստներն ու սօցիալ-զօվինիստները, լինելով բուրժուազիայի ծառաները, հանդիսանում են պրօլետարիատի անմիջական դասակարգային թշնամիները, յատկապէս այժմ, երբ նրանք, կապիտալիստների հետ միացած, զենքերը մեծքերին ճնշում են պրօլետարիատի լեզուաբանական շարժումը, ինչպէս որ իրենց այնպէս էլ օտար երկրներում:

Միւս կողմից, սօցիալիզմի բուրժուական խեղաթիւրումն է հանդիսանում «կէնտրօնի» այն հոսանքը, տեսանելի հաւասարապէս բոլոր կապիտալիստական երկրներում, որը տառապում է սօցիալ-շօփինիստների ու կօմունիստների միջև, պահպանելով մի կերպ համերաշխութիւն առաջինների հետ և տրքնելով վերականգնել անանկացած II Ինտերնացիօնալը: Պրօլետարիատի ազատագրման համար մղուող պայքարի ղեկավարը հանդիսանում է միայն նոր, երրորդ, կօմունիստական ինտերնացիօնալը, որի գեղերից մէկը Ռուսաստանի Կօմունիստական Կուսակցութիւնն է: Այս Ինտերնացիօնալը փաստօրէն ստեղծւած է կօմունիստական կուսակցութիւնների առաջնալով՝ նախկին սօցիալիստական կուսակցութիւնների ճշմարիտ պրօլետարական տարրերից մի շարք երկրներում, և յատկապէս Գերմանիայում, իսկ Եւրոպայում հիմնւած է 1919 թ. մարտին Մօսկվայում՝ իր առաջին համագումարում: Կօմունիստական Ինտերնացիօնալը, որ բոլոր երկրների պրօլետարական մասսաների մէջ էլ աւելի համակրանք է գտնում, ոչ միայն իր անունով է վերագառնում դէպի մարքսիզմը, այլ և իր ամբողջ իդէալական-քաղաքական բովանդակութեամբ, իր բոլոր գործողութիւններով իրականացնում է Մարքսի լեյզափոխական ուսմունքը, որ բուրժուական-օպօրտիւնիստական խեղաթիւրումներից զուլաւ է:

Աւելի կօնկրէա զարգացնելով պրօլետարական դիկտատուրայի առաջադրեալ խնդիրները կիրառելի Ռուսաստանում, որի զլխաւոր յատկանիշն է հանդիսանում բնակչութեան մանր բուրժուական խաւերի թւական գերակշռութիւնը, Ռուսաստ. Կօմուն. Կուսակցութիւնը այդ խնդիրները որոշում է հետեւեալ ձևով.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ.

1. Բուրժուական հանրապետութիւնը, մինչև իսկ ամենագէժօկրատականը, սրբագործւելով համաժողովրդական, համադրային կամ ապագասակարգային կամքի լօղունդներով, գործ-

նականում—շնորհիւ այն բանի, որ գոյութիւն ունէր հողի և արտադրութեան այլ միջոցների մասնաւոր սեփականութիւնը—անխուսափելիօրէն մնաց որպէս բուրժուազիայի դիկտատուրա, որպէս մեքենա շահագործելու և ճնշելու համար աշխատանքների հսկայական մեծամասնութիւնը մի բուռն կապիտալիստների միջոցով: Իրան հակադիր, պրօլետարական կամ խորհրդային դէմօկրատիան հէնց կապիտալիզմի կողմից ճնշւած դասակարգերի, պրօլետարների ու չքաւոր դիւղացիների-կիսապրօլետարների, այսինքն ազգաբնակչութեան հսկայական մեծամասնութեան, մասսայական կազմակերպութիւնները զարձրեց տեղային ու կէնտրօնական, վարից մինչև վեր, ամբողջ պետական ապարատի մշտական ու միակ հիմքը: Այդպիսով իսկ խորհրդային պետութիւնը, ի միջի այլոց, իրագործեց անհամեմատ աւելի լայն չափով, քան որեւէ մի այլ տեղ, շրջանային ու տեղական ինքնավարութիւնը, առանց վերից նշանակւած որեւէ մի այլ իշխանութեան: Կուսակցութեան նպատակն է հանդիսանում անխոնջ աշխատանքը՝ իրապէս կեանքի մէջ մտցնելու լիովին դէմօկրատիզմի այս գերագոյն տիպարը, որ իր կանոնաւոր գործառնութեան համար պահանջում է մասսաների կուլտուրականութեան, կազմակերպւածութեան և ինքնագործունէութեան մակերեւոյթի մշտական բարձրացումը:

2. Բուրժուական դէմօկրատիային հակադիր, որ ծածկում է իր պետական դասակարգային բնոյթը, Խորհրդային իշխանութիւնը բաց ընդունում է ամեն մի պետութեան դասակարգային բնոյթի անխուսափելիութիւնը, քանի որ բոլորովին չի անհետացել հասարակութեան դասակարգային բաժանումը և դրա հետ միասին ամեն մի պետական իշխանութիւն: Խորհրդային պետութիւնը, իր իսկ էութեամբ ուղղւած է ճնշելու հարստահարողների դիմադրութիւնը, և Խորհրդային Սահմանադրութիւնը, երակէտ ունենալով այն, որ ամեն մի ազատութիւն հանդիսանում է խաբեքայութիւն, եթէ նա հակառու է աշխատանքի ազատագրմանը կապիտալի ճնշումից, չի դանդաղում քաղաքական իրաւունքները խլել շահագործողների ձեռքից: Պրօլետարիատի կուսակցութեան դերը կայանում է

նրանում, որ, անշեղորէն ճնշելով էքսպլուատատորների դիմադրութիւնը և իդէալայն պայքարելով այն նախապաշարմունքների դէմ, որոնք խորապէս արմատացած են անպայմանօրէն բուրժուական բնօյթի իրաւունքների և ազատութիւնների շուրջը, նա պէտք է պարզարանի միաժամանակ, թէ քաղաքական իրաւունքներից զրկելն ու ազատութեան ամեն տեսակ սահմանափակումները անհրաժեշտ են բացառապէս որպէս կռիւ ժամանակաւոր միջոցներ՝ հարստահարիչների դէմ, որոնք սրբնում են պահպանել կամ վերականգնել իրենց արտօնութիւնները: Այն չափով, որ չափով կանհետանա մարդը մարդու կողմից կեղեքելու օրիէկտիւ հնարաւորութիւնը, կանհետանա նոյնպէս այդ ժամանակաւոր միջոցների անհրաժեշտութիւնը և կուսակցութիւնը կ'օգտի դրանք սահմանափակել ու լիովին վերացնել:

3. Բուրժուական դէմօկրատիան ռահմանափակում էր քաղաքական իրաւունքների ու ազատութեան, այն է՝ ժողովների, միութիւնների, մամուլի իրաւունքների ձեւական տարածումով՝ հաւասարապէս բոլոր քաղաքացիների վրա: Բայց գործնականում ինչպէս որ վարչական պրակտիկան, այնպէս էլ առաւելապէս աշխատաւորների տնտեսական ստրկացումը շարունակ վերջիններիս, բուրժուական դէմօկրատիայի ժամանակ, դրել է անհնար կացութեան մէջ՝ քիչ թէ շատ լայն չափով օգտագործելու այդ ազատութիւններն ու իրաւունքները:

Ընդհակառակը, պրօլետարական դէմօկրատիան իրաւունքների և ազատութիւնների ձեւական ազդարարման փոխարէն՝ տալիս է դրանք ամենից առաջ ու ամենից աւելի ազդարնակչութեան հէնց այն դասակարգերին, որոնք ճնշւած էին կուպիտալիզմից, այն է՝ պրօլետարիատին և դիւղացիութեանը: Իրա համար Խորհրդային իշխանութիւնը էքսպրօպրացիայի է ենթարկում բուրժուազիայի շինութիւնները, տպարանները, թղթի պահեստները և այլն, դնելով այդ ամենը աշխատաւորների ու նրանց կազմակերպութիւնների լիակատար տրամադրութեան տակ:

Ռուսաստ. Կօմ. Կուս. դերը կայանում է նրանում, որ աշխատաւոր բնակչութեան աւելի ևս լայն մասնակցութիւնը պահպանելից անի դէմօկրատական իրաւունքներով ու ազատութիւններով օգտւելուն, և ընդարձակի սրա նիւթական հնարաւորութիւնը:

4. Բուրժուական դէմօկրատիան դարերի ընթացքում ազդարարել է մարդկանց հաւասարութիւնը՝ սեռից, կրօնից, ցեղից ու ազգութիւնից անկախ՝ սակայն կուպիտալիզմը ոչ մի տեղ թող չի աւել իրականացնելու այդ իրաւահաւասարութիւնը գործով, և իր իմպէրիալիստական ստադիայում նա ցեղական ու ազգային ճնշումը ամենաուժգին սրման է հասցրել: Միայն շնորհիւ այն բանի, որ Խորհրդային իշխանութիւնը աշխատաւորների իշխանութիւնն է, — կարողացաւ մինչև վերջ և կեանքի բոլոր ասպարէզներում, առաջին անգամ աշխարհիս մէջ, անցկացնել այդ իրաւահաւասարութիւնը, մինչև կանանց անհաւասարութեան վերջին հետքերի լիակատար ոչնչացումը՝ ամուսնական և ընդհանրապէս ընտանեկան իրաւունքի շրջանում:

Չսահմանափակելով կանանց ձեւական իրաւահաւասարութիւնով, կուսակցութիւնը ձգտում է ազատադրել նրանց հրնացած տնային տնտեսութեան նիւթական ծանրութիւններից, փոխարինելով այդ տնտեսութիւնը տնային կօմունաներով, հասարակական հաշարաններով, կենտրոնական բացքատներով, մանուկների ապաստարաններով և այլն:

5. Աշխատաւոր մասսաների համար ապահովել անհամեմատ աւելի մեծ հնարաւորութիւններ, քան բուրժուական դէմօկրատիայի և պարլամէնտարիզմի ժամանակ, կայացնելու ընտրութիւններն ու լեւո փանչելու պատգամաւորներին՝ բանւորների և գիւղացիների համար ամենանշեշտ ու մատչելի եղանակով, Խորհրդային իշխանութիւնը միաժամանակ ոչնչացնում է պարլամէնտարիզմի բացասական կողմերը, մանուսանդ օրէնսդիր և գործադիր իշխանութիւնների իրարից բաժանելը, ներկայացուցչական հիմնարկութիւնների մասսաներից կտրւած լինելը և այլն:

Խորհրդային Պետութիւնը մօտիկացնում է պետական ապարատը մասսաներին նաև այն բանով, որ ընտրողական միաւորը և պետութեան հիմնական բնիկը ոչ թէ տէրիտօրիալ շրջանն է հանդիսանում, այլ արտադրական միաւորը (գործարան, ֆաբրիկա):

Կուսակցութեան դերը կայանում է նրանում, որ ամբողջ աշխատանքը այդ ուղղութեամբ տանելով, կարենա աշխուհետեւ իշխանութեան օրդանները մօտիկացնել աշխատաւոր մասսաների հետ, այդ մասսաների միջոցով աւելի ևս անխախտ ու աւելի ևս լրիւ իրազօրծելու դէմօկրատիզմը գործնական կեանքում, նամանաւանդ պաշտօնակատար անձնաւորութիւնների պատասխանատուութիւնն ու հաշւետւութիւնը հաստատելու ուղիով:

6. Այն ժամանակ, մինչ բուրժուական դէմօկրատիան, իր դէկլարացիաներին հակառակ, զօրքը ունենոր գասակարգերի գործիքն էր դարձել, անշատելով նրան աշխատաւոր մասսաներից և սրա դէմ հանելով նրան, ոչնչացնելով կամ դժարացնելով զինւորների համար քաղաքական իրաւունքները, Խորհրդային պետութիւնը ծուլում է իր օրդաններում, Խորհրդների մէջ, բանւորներին և զինւորներին, սրանց իրաւունքների հաւասարութեան և սրանց շահերի միութեան լիակատար հաւասարութեան հիմունքներով: Կուսակցութեան դերն է հանդիսանում՝ պահպանել ու զարգացնել բանւորների և զինւորների այդ միութիւնը Խորհրդների մէջ, ամրացնելով զինւած ուժի անքակտելի կապը պրօլետարիատի և կիսապրօլետարիատի կողմակերպութիւնների հետ:

7. Ամբողջ լեղափոխութեան մէջ քաղաքային արդիւնագործական պրօլետարիատի, որպէս աշխատաւոր մասսաների ամենից աւելի համախմբւած, միացած, լուսաւորւած ու կռիւների մէջ եփւած մասի, ղեկավար դերը երեւան եկաւ, ինչպէս որ հէնց Խորհուրդները առաջանալիս, այնպէս էլ իշխանութեան օրդաններ դառնալու նրանց զարգացման ամբողջ ընթացքում: Մեր Խորհրդային Սահմանադրութիւնը արտացոլել է այդ, պահպանելով մի քանի առաւելութիւններ արդիւնա-

գործական պրօլետարիատի համար՝ զիւղի ցիր ու ցան մանրբուրժուական մասսաների համեմատութեամբ:

Ռ. Կ. Կ-ը, պարզարանելով այդ առաւելութիւնների ժամանակաւոր ընդթր, որ պատմականօրէն կապւած են զիւղը սօցիալիստականօրէն կազմակերպելու դժարութիւնների հետ, պէտք է ձգտի անշեղ ու սիստեմատիք կերպով օգտագործել արդիւնագործական պրօլետարիատի այդ դրութիւնը նրա համար, որ ինչպէս հակադրութիւն նեղ - համքարական ու նեղարհետակցական շահերին, որ կապիտալիզմն էր անեցնում բանւորների մէջ, աւելի սերտօրէն միացնի առաջաւոր բանւորների հետ զիւղական պրօլետարների ու կիսապրօլետարների, և նմանապէս միշին զիւղացիութեան, աւելի քան լեռամնաց և ցիր ու ցան մասսաները:

8. Միայն պետութեան Խորհրդային կազմակերպութեան շնորհիւ՝ պրօլետարիատի լեղափոխութիւնը կարող էր մէկէն փշրել ու հիմքէն կործանել հին, բուրժուական, չինօվնիկական ու դատաւորական պետական ապարատը: Սակայն լայն մասսաների ոչ բաւականաչափ բարձր կուլտուրական մակերեւութը, մասսաների կողմից պատասխանատու դիրքերի վրա դրւած աշխատողների, կառավարելու գործում, անհրաժեշտ փորձառութիւններից զուրկ լինելը, ծանր պայմաններում հին շկօլայի մասնագէտներին շուտափոյթ գործի հրաւիրելու անհրաժեշտութիւնը և քաղաքային բանւորների ամենազարգացած խաւին դէպի զինւորական աշխատանք մղելը Խորհրդային կարգերի ներսում մասնակի կերպով վերածնեցին բիւրօկրատիզմը:

Ամենափոխական կռիւր մղելով բիւրօկրատիզմի դէմ, Ռուսաստ. Կօմ. Կուս.-ը, այդ չարիքը ամբողջովին արմատախիլ անելու համար, առաջադրում ու պաշտպանում է հետեւեալ միջոցները:

1. Խորհրդի իւրաքանչիւր անդամին պարտադիր կերպով ենթարկել՝ պետութիւնը կառավարելու գործում որոշ աշխատանք կատարելու:

2. Այդ աշխատանքները յաջորդականօրէն փոփոխել, այն իմաստով, որ նրանք աստիճանաբար ընդգրկեն վարչական բոլոր ճիւղերը:

3. Անխտիր ամբողջ աշխատաւոր բնակչութիւնը աստիճանաբար պետութիւնը կառավարելու աշխատանքի մէջ գրաւել:

Այս բոլոր միջոցների լիակատար ու բազմակողմանի գործադրութիւնը, հանդիսանալով յետագա քալը այն ճանապարհի վրա, որով ընթացաւ Փարիզի Կոմունան, և վարչական ֆունկցիաների պարզացումը, աշխատաւորների կուլտուրական մակերեսի բարձրացումով, տանում են դէպի պետական իշխանութեան ոչնչացումը:

ԱԶԳԱՅԻՆ ՅՈՐԱՐԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ.

9. Ազգային հարցում Ռուսաստ. Կոմունիստ. Կուսակց. ղեկավարում է հետեւեալ դրութիւններով.

1) Անկիւնաքարը կազմում է ղանազան ազգութիւնների պրօլետարների և կիսապրօլետարների մերձեցման քաղաքականութիւնը՝ կալաժատէրերին և բուրժուազիային տապալելու համար միահամուռ յեղափոխական կռիւ մղելու:

2) Նպատակ ունենալով չէզոքացնել ճնշւած երկրների աշխատաւոր զանգվածների անվտանգութիւնը դէպի՝ այդ երկրները ճնշող՝ պետութիւնների պրօլետարիատը, անհրաժեշտ է՝ ոչնչացնել ամեն մի ազգային դուռապալի բոլոր ու ամեն տեսակ արտօնութիւնները, հաստատել ազգութիւնների լիակատար իրաւահաւասարութիւնը, ճանաչել ազգութիւնների և ոչ իրաւահաւասար ազգութիւնների իրաւունքը՝ պետական անշաւան վերաբերմամբ:

3) Այդ նոյն նպատակներով, կուսակցութիւնը, որպէս մէկը անցողական ծեւրից լիակատար միութեան ճանապարհին՝ առաջադրում է Խորհրդային տիպարով կազմակերպւած պետութիւնների ֆէդերատիւ միացումը:

4) Այն հարցում, թէ ո՞վ է հանդիսանում անշաւան կողմնակից ազգութեան կամքի արտայայտիչը, Ռ. Կ. Կ. կանգնած է պատմական-դասակարգային տեսակէտի վրա, հաշի առնելով այն, թէ իր պատմական զարգացման որ աստիճանի վրա է կանգնած տւեալ ազգութիւնը. միջնադարից դէպի բուրժուական դեմօկրատիան, թէ՛ բուրժուական դեմօկրատիայից դէպի Խորհրդային կամ պրօլետարական դեմօկրատիան և այլն տանող ճանապարհի վրա:

Յամենայն դէպս, այն ազգութիւնների պրօլետարիատի կողմից, որոնք ճնշող ազգութիւններ են եղել, հարկաւոր է առանձին զգուշութիւն ու առանձին ուշադրութիւն ճնշւած կամ ոչ լիահաւասար ազգութիւնների աշխատաւոր զանգվածների ունեցած ազգային զգացմունքների վերաբերմամբ: Միայն այդպիսի քաղաքականութիւնով հնարաւոր է միջազգային պրօլետարիատի ազգայնօրէն ալլազան էլեմէնտների իրապէս ամուր, սիրական միութեան համար սլաքաններ ստեղծել, ինչպէս որ այդ ցոյց տւեց Խորհրդային Ռուսաստանի շուրջ մի շարք ազգային Խորհրդային հանրապետութիւններ միացնելու փորձը:

ԶԻՆՒՈՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ.

10. Զինւորական ասպարիզում կուսակցութեան դերը որոշւում է հետեւեալ հիմնական դրութիւններով.

1) Իմպերիալիզմի կազմալուծման և ժաւալող քաղաքացիական պատերազմի էպօսալում հնարաւոր չէ պահել ո՛չ հին բանակը, ո՛չ էլ նորը՝ կազմել՝ այսպէս կոչւած ապադասակարգային կամ համազգային հիմունքներով հարմիր Բանակը, որպէս պրօլետարական զինատուրայի զէնք, անհրաժեշտօրէն պէտք է ունենա որոշակի դասակարգային բնոյթ, այսինքն կազմակերպւի բաղառապէս պրօլետարիատից և զիւղացիութեան նրան մօտիկ կանգնած կիսապրօլետարական խաւերից: Միայն դասակարգների ոչնչացման հետ միասին անհրաժեշտ կ'առաջանա Խորհրդային կազմակերպւած զինատուրայի բանակը կլերածի իր անհրաժեշտ օգիւղիստական միլիցիայի:



1003
1835

2) Անհրաժեշտ է բոլոր պրօլետարներին և կիսապրօլետարներին ամենալայն չափով վարժեցնել զինւորական գործին և դպրոցներում համապատասխան առարկաների դաստւանդութիւնը մտցնել:

3) Կարմիր բանակի զինւորական ուսուցման ու դաստիարակման աշխատանքը կատարուծ է դասակարգային համասնման և սօցիալիստական լուսաւորութեան հիմունքներով: Ուստի ռազմական ղեկավար-հրամանատարների հետ միասին անհրաժեշտ են՝ քաղաքական կօմիսարներ վստահելի և անձնագոհ կօմունիստներէց, և իւրաքանչիւր մասում կօմունիստական խմբակներ կազմակերպել՝ ներքին իդէական կապ և գիտակցական դիսցիպլինա հաստատելու համար:

4) Հին բանակի վարժութիւններին հակադիր, անհրաժեշտ են.—հնարաւոր եղածին չափ կարճ ժամանակամիջոց գործադրել զուտ զօրանոցային ուսուցման համար, զօրանոցները մօտեցնել զինւորական ու զինւորա-քաղաքական դպրոցների տիպարին, հնարաւոր չափով սերտօրէն կապել զինւորական կազմակերպումները ֆաբրիկաների, գործարանների, արհեստակցական միութիւնների, գիւղական չքաւոր մասսաների կազմակերպութիւններին հետ:

5) Երիտասարդ լեզափոխական բանակին անհրաժեշտ կազմակերպչական կապ ու կալունութիւն կարելի է տալ գիտակից բանւորների ու գիւղացիների միջավայրից ելած, սկզբնական շրջաններում թէկուզ ստորին, հրամանատարական կազմի օգնութեամբ միայն: Ուստի զօրաբանակ ստեղծելու գործում, ամենակարեւոր խնդիրներից մէկը հանդիսանում է՝ ամենաընդունակ ու եռանդուն և սօցիալիզմի գործին նւիրած զինւորներին պատրաստել հրամանատարական պաշտօնների համար:

6) Անհրաժեշտ է լայն չափով օգտագործել ու կիրառել վերջին համաշխարհային պատերազմի օպէրատիվ ու տէխնիքական փորձառութիւնը: Սրա հետ միասին անհրաժեշտ է բանակը կազմակերպելու և նրա օպէրատիվ գործին հրաւիրել լայն չափով զինւորական մասնագէտներին, որոնք անցել են հին բանակի դպրոցը: Իր հերթին, այդպիսիներին գործի առնելու ան-

հրաժեշտ պայման է հանդիսանում՝ բանակի քաղաքական ղեկավարութիւնն ու հրամանատարական կազմի վրայ բազմակողմանի կօնտրօլը կենտրոնացնել բանւոր դասակարգի ձեռքում:

7) Հրամանատարական կազմի բնութելու պահանջը, որ հրակական սկզբունքային նշանակութիւն ունէր բուրժւական բանակի վերաբերմամբ, ուր հրամանատարական կազմը յատուկ վերցւում ու կրթւում էր, որպէս մի ապարատ՝ հպատակեցնելու զինւորներին և, զինւորների միջոցով, աշխատաւոր մասսաներին,—միանգամայն կորցնում է իր սկզբունքային նշանակութիւնը՝ դասակարգային բանւորական և գիւղացիական Կարմիր Բանակի վերաբերմամբ: Ընտրելու և նշանակելու հնարաւոր կոմիտեային լեզափոխական դասակարգային բանակին թելադրուծ է բացառապէս գործնական նկատառումներով և կախած է զօրակազմութեան իր հառած մակերևոյթից, զօքամասերի կուռ-միութեան աստիճանից, հրամանատարական կարգեր ձեռքի տակ ունենալուց և այլն:

ԴՍՏԱՍՏԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ.

11. Իր ձեռքն առնելով ամբողջ իշխանութիւնը և վերացնելով առանց հետքերի բուրժւական տիրապետութեան օրգաններ—նախկին կառուցւածքի դատարանները—պրօլետարական դէմօկրատիան, «դատաւորներ ընտրի ժողովուրդը», բուրժւական դէմօկրատիայի այս ֆօրմուլայի տեղ, առաջ մղեց «դատաւորներ ընտրեն միայն աշխատաւորները աշխատաւորական շարքերից» դասակարգային լօգունգը և անցկացրեց այդ դատարանի ամբողջ կազմակերպութեան մէջ, դրա հետ միասին հաւասարեցնելով իրար երկու ռեժիմ բոլոր իրաւունքներում, ինչպէս որ դատաւորների ընտրութեան, այնպէս էլ դատաւորների պարտականութիւնները կատարելու մէջ:

Պրօլետարիատի և չքաւոր գիւղացիութեան ամենալայն մասսաները արդարադատութիւնը տանելու աշխատանքի մէջ առնելու համար՝ հաստատուած է մշտապէս փոխարինւող ժամանակաւոր դատաւոր-ատենակալների մասնակցութիւնը դատա-

բանում, ցուցակները կազմելու գործի մէջ հրաւիրելով մասնաւոր-
կան բանտրական կազմակերպութիւնները, պրօֆէսիօնալ միութեանները և այլն:

Ստեղծելով ամբողջական ժողովրդային դատարան, բազմա-
թիւ ինստանցիաներ ունեցող զանազան կառուցւածքի նախկին
դատարանների անվերջ շարքերի փոխարէն, Խորհրդային իշխա-
նութիւնը պարզացրել է դատարանի կառուցումը, բացարձա-
կօրէն մատչելի դարձնելով այն ազգաբնակչութեան համար, և
դուրս մղելով ամեն տեսակ արւեստական ծգծողումներ դորժա-
վարութեան մէջ:

Վերացնելով տապալւած կառավարութիւնների օրէնքները,
խորհրդային իշխանութիւնը չանձնարարել է Խորհրդայինների
կողմից ընտրւած դատաւորներին՝ իրազօրեւ պրօլետարիատի
կամքը, գործադրելով նրա դէկրէտները, իսկ այդպիսիները չի-
նելու կամ նրանց թերութեան դէպքում ղեկավարել սօցիա-
լիստական իրաւական հասկացողութիւնով:

Պատիժների բաժնում այդ ձևով կազմւած դատարաններն
արդէն արմատական փոփոխութեան են ենթարկել պատժի
բնոյթը, իրականացնելով լայն չափերով պայմանական դատա-
պարտութիւնը, մտցնելով օրսկէս պատժի միջոց հասարակական
պարտաւանքը, ազատութիւնից զրկելը փոխարինելով պարտադիր
աշխատանքի՝ պահպանելով ազատութիւնը, բանտերը փոխարի-
նելով կրթիչ հաստատութիւններով և հնարաւորութիւն տա-
լով ընկերական դատարանների պրակտիկան դորժադրել:

Ռուսաստանի Կոմունիստական կուսակցութիւնը, սրտ-
գանկելով դատարանի լեռնազա զարգացումը այդ իսկ ուղիով,
պէտք է ձգտի նրան, որ ամբողջ ազգաբնակչութիւնը անխտիր
մասնակից լինի դատաւորական պարտականութիւնները կատա-
րելու մէջ, և որ պատիժների սխառն միջոցներով վերջնականապէս
փոխարինւի կրթիչ բնոյթ ունեցող միջոցների սխառնմով:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱԼՈՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ.

12. Ժողովրդական լուսաւորութեան ասպարիզում Ռու-
սաստ. Կոմուն. Կուսակցութիւնը իրեն նպատակ է դնում
հասցնել մինչև վերջը 1917 թւի հոկտեմբերեան լեղափոխու-
թիւնից սկսած գործը, այն է, բուրժուազիայի դատակար-
դային տիրապետութեան գործիք-դպրոցը դարձնել հասարակու-
թեան դատակարգային բաժանումը լիովին ոչնչացնելու մի գոր-
ծիք, հասարակութեան Կոմունիստական վերածնման գործիքը:

Պրօլետարիատի ղեկատուութիւնի ժամանակաշրջանում, ալ-
սինքն Կոմունիզմի լիակատար իրականացումը հնարաւոր դար-
ձնող պայմանների նախապատրաստական պէրիօդում, դպրոցը
պէտք է անցկացնի կեանքի մէջ ոչ միայն Կոմունիզմի սկզբունք-
ներն ընդհանրապէս, այլև պէտք է անցկացնի պրօլետարիատի
իրէական, կազմակերպչական, կրթական ազդեցութիւնը աշխա-
տաւոր մասսաների կիսապրօլետարական և ոչ-պրօլետարական
խաւերի վրա՝ դաստիարակելու համար մի սերունդ, որ ընդունակ
է վերջնականապէս հաստատել Կոմունիզմը: Այդ ճանապարհում
ներկայումս մօտաւոր նպատակ է հանդիսանում խորհրդային
իշխանութեան կողմից արդէն հաստատւած դպրոցական և
լուսաւորութեան գործի հետեւեալ հիմունքների լետադալ զար-
գացումը:

1) Չրի և պարտադիր ընդհանուր և պոլիտէխնիքական
(տեսականօրէն և գործնականօրէն արտադրութեան բոլոր պլ-
խաւոր ճիւղերի հետ ծանօթացնող) կրթութիւն հաստատել
երկու սեռի մինչև 17 տարեկան բոլոր երեխաների համար:

2) Նախակրթական հիմնարկութիւնների, մանկանոցների,
պարտէզների, տպաստարանների և այլն ցանցեր ստեղծել, հասա-
րակական կրթութեան բարելւման և կնոջ ազատազրման նը-
պատակով:

3) Լիովին իրականացնել ամբողջական աշխատանքային դպ-
րոցի սկզբունքները՝ մայրենի լեզուով դասաւանդութեամբ, եր-
կու սեռի երեխաների միատեղ ուսուցմամբ, դպրոցի, որ, ան-
պայման աշխարհիկ, այսինքն որևէ կրօնական ազդեցութիւնից
ազատ, սերտ կապ է հաստատում ուսուցման և հասարակական-

արտադրական աշխատանքի միջև, կոմունիստական հասարակութեան բաղմակողմանի զարգացած անդամներ է պատրաստում:

4) Բոլոր աշակերտներին սնունդ, հագուստ, ոտնաման և դասական պիտույքներ մատակարարել պետութեան հաշվին:

5) Կոմունիզմի զաղափարներով ներշնչված լուսավորութեան աշխատակիցների նոր խմբեր պատրաստել:

6) Աշխատաւոր ազգայնակցութեանը հրաւիրել ակտիվ մասնակցութեան լուսավորութեան գործում (ժողովրդական կրթութեան խորհուրդների զարգացումը, գրագէտների մօրիլիզացիան և այլն):

7) Ամեն տեսակ պետական աշակցութիւն ցոյց տալ բանւորների և գիւղացիների ինքնակրթութեանն ու ինքնազարգացմանը (գլխորդներից դուրս կրթական հիմնարկութիւններ՝ գրադարանների, հասակաւորների համար դպրոցների, ժողովրդական տների ու համալսարանների, դասընթացների, դասախօսութիւնների, կինէմատոգրաֆների, ստուդիաների և այլն ցանցեր ստեղծել):

8) 17 տարեկանից վեր անձնավորութիւնների համար լայն կերպով զարգացնել պրոֆէսիօնալ կրթութիւնը, ընդհանուր պօլիտէկնիքական գիտելիքների հետ միասին:

9) Բարձրագոյն դպրոցների աուդիտօրիաները մտնելու լայն հնարաւորութիւն տալ բոլոր սովորել ցանկացողներին, և առաջին հերթին՝ բանւորներին. բարձրագոյն դպրոցում դասաւանդման գործունէութեան հրաւիրել բոլոր նրանց, ովքեր կարող են այնտեղ ուսուցանել. թարմ գիտական ուժերի և կաֆէդրայի միջև եղած բոլոր և ամեն տեսակ արեւստական պատւարները վերացնել. նիւթապէս ապահովել ուսանողներին, նպատակ ունենալով՝ բարձրագոյն դպրոցից օգտուելու փաստական հնարաւորութիւն տալու, պրօլէտարներին և գիւղացիներին:

10) Կոմունիստական իդէաների ամենալայն պրօպագանդական զարկ տալ և այդ նպատակով օգտագործել պետական իշխանութեան ապարատն ու միջոցները:

ԿՐԾՆԱԿԱՆ ՅԱՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ.

13. Կրօնի վերաբերմամբ Ռ. Կ. Կ. չի բաւականանում արդէն դէկրէտներով յայտարարւած եկեղեցին պետութիւնից և դպրոցը եկեղեցուց բաժանելով. այսինքն այն միջոցներով, որ բուրժւական դէմօկրատիան առաջադրում է իր ծրագիրներին մէջ, սակայն ոչ մի տեղ աշխարհում չի հասցրել մինչև իր վախճանին, շնորհիւ կրօնական պրօպագանդայի հետ ունեցած կապիտալի բաղմատեսակ փաստական կապերին:

Ռ. Կ. Կ. ղեկավարւում է այն համոզմունքով, որ մասսաների հասարակական-տնտեսական ամբողջ գործունէութեան մէջ համաչափութեան և գիտակցականութեան իրականացումը միայն առաջ կրերի կրօնական նախապաշարմունքների լիակատար անհետացումը: Կուսակցութիւնը ձգտում է ամբողջապէս ոչնչացնել այն կապը, որ կա շահագործող դասակարգերի և կրօնական պրօպագանդայի կազմակերպութեան միջև, նպատակելով աշխատաւոր մասսաներին փաստօրէն ազատել կրօնական նախապաշարմունքներից և կազմակերպելով ամենալայն գիտական-լուսավորչական և հակա-կրօնական պրօպագանդան: Միաժամանակ անհրաժեշտ է հոգատարութեամբ խոյս տալ հաւատացողների զգացմունքները ամեն կերպ վիրաւորելուց, որ միայն առաջ է բերում կրօնական ֆանատիզմի ուժեղացումը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ.

1. Անշեղ կերպով շարունակել և մինչև վերջը հասցնել սկսած և զլխաւոր ու հիմնական մասերում արդէն վերջացրած բուրժւադիալի էքսպրօպրացիան. արտադրութեան և շրջանաւորութեան միջոցները դարձնել Խորհրդային Ֆանրապետութեան սեփականութիւն, այսինքն՝ բոլոր աշխատաւորների բողհանուր սեփականութիւնը:

2. Որպէս զլխաւորն ու հիմնականը, որ որոշում է իրմով Խորհրդային իշխանութեան ամբողջ տնտեսական քաղաքականութիւնը, առաջադրել երկրի արտադրողական ուժերի ամեն

կերպ անուամբ: Ի նկատի ունենալով երկրի ապրած ամենածանր քայքայումը, պէտք է գործնական նպատակին, այն է՝ անյապաղ ու ինչ էլ որ ուղում է լինի շատացնել աղգարնակութեան համար անհրաժեշտ միջոցների քանակը, հնթարկել բոլոր մնացածը:

Այդ տեսակետից, որպէս գործնական հետեւանք, չափանիշ պէտք է ընդունել աշխատանքի արդիւնաւէտութիւնը իւրաքանչիւր Խորհրդային հիմնարկութեան, որը կապ ունի ժողովրդային տնտեսութեան հետ:

Ուստի անհրաժեշտ է առաջին հերթին ուշադրութիւն դարձնել հետեւեալի վրա:

3. Իմպէրիալիստական տնտեսութեան կազմալուծումը Խորհրդային շինարարութեան առաջին ժամանակաշրջանին ժառանգութիւն է թողել որոշ քառասուն դրութիւն՝ արտադրութիւնը կազմակերպելու և այն կառավարելու գործում: Որպէս մէկը արմատական խնդիրներից, աւելի ևս հրեմագողարար առաջ է մղում երկրի ամբողջ տնտեսական գործունէութեան մարտնչական միացումը՝ մէկ համապետական նախագծւած ձևով՝ արտադրութեան առաւելագոյն կէնտրոնացումը այն իմաստով, որ արտադրութեան առանձին ճիւղերը ու ճիւղերի գրուպպաները միացնեն և նա ամենալաւագոյն արտադրական միաւորների մէջ կէնտրոնանա և տնտեսական առաջադրեալ գործերը արագօրէն իրականացնեն, ամբողջ արտադրական ապարատի ամենալայն չափով կարգաւորումը, երկրի բոլոր նիւթական ռէսուրսների բացիօնալ ու խնայողարար օգտագործումը:

Այդպիսով անհրաժեշտ է հոգալ միւս ժողովրդների հետ տնտեսական աշխատակցութեան և քաղաքական կապերի ընդարձակման մասին, ձգտելով միաժամանակ մէկ-միակ տնտեսական յատակադիմ հաստատուն ժողովուրդներից նրանց հետ, որոնք անցել են արդէն դէպի Խորհրդային կառուցումը:

4. Մանր և կուստարային արդիւնագործութեան վերաբերմամբ՝ անհրաժեշտ է լայն չափով օգտագործել այն, կուստարներին պետական պատէրներ տալու ճանապարհով՝ տնայնագործական և մանր արդիւնագործութիւնը մտցնել հում նիւ-

թով և վառելիքով մատակարարելու ընդհանուր նախագծի (план) մէջ, և նմանապէս դրանց ֆինանսական աշակցութիւն ցոյց տալ, առանձին կուստարներին, տնայնագործական արտէլներն, արտադրողական կօօպերատիւներն ու մանր ձեռնարկութիւնները աւելի խոշոր արտադրական ու արդիւնագործական միաւորների մէջ միացնելու պայմանով, խրախուսել նմանօրինակ միացումները՝ ապով նրանց տնտեսական առաւելութիւններ, որոնք այլ միջոցների հետ միասին նպատակ ունեն կուստարների մանր արդիւնագործներ դառնալու ձգտումը խորտակել և ստեղծել արտադրութեան այդ լեռամնաց ձեւերի ոչ հիւսնադադին փոխանցումը աւելի բարձր խոշոր մեքենաշարժ ինդուստրիային:

5. Համայնացրած արդիւնագործութեան կազմակերպչական ապարատը նախ և առաջ պէտք է լինի արհեստակցական միութիւնների վրայ: Նրանք պէտք է աւելի ևս ազատագրեն համքարական սահմանափակութիւնից և դառնան խոշոր արտադրական միութիւններ, որ ընդգրկում են արտադրութեան տեւալ ճիւղի աշխատաւորների մեծամասնութիւնը, իսկ հետգհետէ և բոլորին անխտիր:

Արհեստակցական միութիւնները, Խորհրդային հանրապետութեան օրէնքների և հաստատւած պրակտիկայի համաձայն արդէն իսկ մասնակցելով արդիւնագործութեան բոլոր տեղային և կէնտրոնական վարչական օրգաններում, պէտք է զան փոստօրէն իրենց ձեռքը ամփոփելու բովանդակ ժողովրդական տրտեսութեան, որպէս մէկ և ամբողջական տնտեսութեան, ամբողջովին կառավարելու: Այդպիսով, ապահովելով կէնտրոնական պետական վարչութեան, ժողովրդական տնտեսութեան և աշխատաւորների լայն մասսաների միջև անքակտելի կապը, արհեստակցական միութիւնները պէտք է ամենալայն չափերով ներս առնեն վերջիններիս տնտեսութիւնը կառավարելու անմիջական աշխատանքի մէջ: Պրօֆէսիօնալ միութիւնների մասնակցութիւնը տնտեսութիւնը կառավարելուն մէջ և լայն մասսաներին գործակցութիւն տալը նրանց միջոցով՝ հանդիսանում է, միաժամանակ, նաև Խորհրդային

իշխանութեան տնտեսական ապարատի բիւրօկրատացման դէմ պայքարելու գլխաւոր միջոց և հնարաւորութիւն է տալիս իրօք ժողովրդական կօնորօյ հաստատել արտադրութեան արդիւնքների վրա:

6. Ժողովրդական տնտեսութեան պլանօմէր զարգացման նպատակով անհրաժեշտ է մաքսիմալ չափով օգտագործել պետութեան մէջ եղած ամբողջ բանւորական ուժը, նրա ուղիղ կերպով դասաւորելն ու վերադասաւորելը, ինչպէս որ զանազան տէրրիւօրիալ շրջանների միջև, այնպէս էլ ժողովրդական տնտեսութեան տարբեր ճիւղերի միջև, պէտք է կազմի Խորհրդային իշխանութեան տնտեսական քաղաքականութեան մօտաւոր նպատակը, որ կարող է իրագործւել նրա միջոցով միայն պրօֆէսիօնալ միութիւնների հետ սերտ կապ հաստատելով: Աշխատանքի ընդունակ ողջ ազգաբնակչութեան անխտիր մօբիլիզացիան Խորհրդային իշխանութեան միջոցով, պրօֆէսիօնալ միութիւնների մասնակցութեամբ, որոշ հասարակական աշխատանքներ կատարելու համար, պէտք է կիրառւի անհամեմատ աւելի լայն ու սիստէմատիկ չափով, քան այդ արւել է մինչև այսօր:

7. Աշխատանքի կապիտալիստական կազմակերպութեան անկման պայմաններում երկրի արտադրողական ուժերը կարելի է վերականգնել և զարգացնել, իսկ արտադրութեան սօցիալիստական եղանակը կարելի է կաշուէն դարձնել միայն աշխատաւորների ընկերական դիսցիպլինայի, նրանց մաքսիմալ ինքնաշխատութեան, պատասխանատւութեան զիտակցումի և աշխատանքի արդիւնաւէտութեան վրա ամենախիստ փոխադարձ կօնորօյի հիմունքներով:

Այդ նպատակին հասնելը պահանջում է յամառ սիստէմատիկ աշխատանք՝ մասսաները վերակրթելու, որը հեշտացրւած է այժմ յատկապէս շնորհիւ այն բանի, որ մասսաները դորձնականապէս տեսնում են կապիտալիստի, կալւածատիրոջ ու վաճառականի հեռացումը և սեփական պրակտիկ փորձով գալիս են այն համոզման, թէ իրենց բարեկեցութեան մակերևոյթը

կախւած է բացառապէս իրենց սեփական աշխատանքը կարգ ու կանոնի բերելուց:

Նոր սօցիալիստական դիսցիպլինա բաղկանում է աշխատանքի մէջ գլխաւոր դերը բաժին է ընկնում պրօֆէսիօնալ միութիւններին: Վերջիններս, հրաժարւելով հին շարունից, այս նպատակը իրագործելու համար պէտք է կիրառեն և փորձեն ու տեսնեն զործնական կեանքում բազմատեսակ միջոցներ, ինչպէս օրինակ.— հաշւետւութեան սահմանումը, մշակման նօրմաները, յատուկ ընկերական բանւորական դատարանների առաջ պատասխանատւութիւն մտցնելը և այլն:

8. Արտադրողական ուժերի զարգացման այդ նոյն նպատակը պահանջում է անչափազ, լայն և բազմակողմանի կերպով օգտագործել կապիտալիզմից մեղ ժառանգութիւն թողնւած գիտութեան և տէխնիկայի մասնագէտներին, չնայած այն բանին, որ սրանք մեծ մասամբ անխուսափելիօրէն խորապէս լցւած են բուրժւական աշխարհայեցողութեամբ ու սովորութիւններով: Կուսակցութիւնը համարում է, թէ այս խաւի դէմ սուր պայքարի շրջանը, որ առաջ էր եկել սրա կազմակերպած սաբոտաժի շնորհիւ, վերջացել է, որովհետև այդ սաբոտաժն ընդհանուր առմամբ յաղթահարւած է: Կուսակցութիւնը, պրօֆէսիօնալ միութիւնների հետ սերտ դաշնակցելով, պէտք է առաջ տանի իր նախկին գիծը.— մի կողմից ամենափոքր զիջում իսկ չանի բուրժւական այս խաւին և առանց խնայելու ճնշի նրա ամեն մի հակալեզափոխական փորձը, իսկ միւս կողմից՝ նոյնպէս անխնա կռւի իբր թէ-րադիկալ, բայց իրապէս գոհնիկ այն ինքնահաւանութեան դէմ, որ իբր աշխատաւորները ի վիճակի են վերացնելու կապիտալիզմը և բուրժւական կարգերը, չսովորելով բուրժւական մասնագէտներից, չօգտագործելով նրանց, չանցնելով աշխատանքի երկար դպրոցը նրանց հետ միասին:

Զգուշով ամեն տեսակ աշխատանքի համար եղած վարձատրութեան հաւասարեցմանը և լիակատար կօմունիզմին, Խորհրդային իշխանութիւնը չի կարող իրեն նպատակ դնել՝ անմիջապէս իրականացնել այդ հաւասարութիւնը ներկա մօ-

մէնտում, երբ կապիտալիզմից կօմունիզմին առաջին քայլերն են արւում: Ուստի անհրաժեշտ է մի որոշ ժամանակ դեռ ևս պահպանել աւելի մեծ վարժապետութիւն սպէցիալիստների համար, որպէսզի նրանք կարողանան աշխատել ոչ թէ վատ, այլ աւելի լաւ, քան առաջ, և հէնց այդ նպատակի համար չի կարելի հրաժարուել պրէմիանների սխտէմից՝ ամենայաջող և առանձնապէս կադմակերպչական աշխատանքի համար:

Նմանապէս, անհրաժեշտ է բուրժուական մասնագէտներին դնել ընկերական ընդհանուր աշխատանքի պայմանների մէջ ձեռք ձեռքի տւած սովորական բանւորների մասսայի հետ, որին դեկափարում են գիտակից կօմունիստները, և դրանով նպաստել կապիտալիզմի շնորհիւ իրարից բաժանւած, ֆիզիքական և մրտաւոր աշխատանքի մշակներին փոխադարձաբար իրար հասկանալու և մօտենալու:

9. Խորհրդային իշխանութիւնն արդէն ձեռք է առել մի շարք միջոցներ, որոնք ուղղւած են գիտութիւնը դարգացնելու և այն արտադրութեան հետ մօտեցնելու համար. այն է՝ նոր գիտական-գործնական ինստիտուտների, լաբորատորիաների, փորձնական կայանների, նոր տէխնիքական մէթօդները վերանորոգելու համար փորձնական գործառնութիւնների, կատարելագործութիւնների և գիւտերի մէկ ամբողջ ցանց ստեղծելը, բոլոր գիտական ուժերի և միջոցների ցուցակագրումն ու կադմակերպումը և այլն: Ռուսաստանի Կօմունիստական Կուսակցութիւնը, պաշտպանելով այդ բոլոր միջոցները, ձգտում է նրանց յետագա զարգացմանը և գիտական աշխատանքի աւելի բարենպաստ պայմաններ ստեղծելուն՝ երկրի արտադրողական ուժերի բարձրացման հետ կապւած:

ԳԻՒՂԱՏՆՏԵՍ ՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ.

10. Խորհրդային իշխանութիւնը, իրագործելով հողի մասնաւոր սեփականութեան լիակատար վերացումը, անցել է արդէն կեանքի մէջ մտցնելու մի շարք միջոցներ, որոնք ուղղւած են խոշոր սօցիալիստական հողագործութիւնը կազմա-

կերպելու: Այդ միջոցներից ամենակարեւորները հանդիսանում են.

1) Խորհրդային տնտեսութիւնների, այսինքն խոշոր սօցիալիստական էկօնօմիաների, հաստատումը. 2) հողի հանրային մշակման համար հասարակութիւնների, և հաւասարապէս ընկերութիւններին աջակցելը. 3) բոլոր, ում էլ որ լինի, չցանւած հողերի պետական ցանքսի կազմակերպումը. 4) բոլոր ագրօնօմ ուժերի պետական մօրիլիդացիան՝ գիւղատնտեսական կուլտուրան բարձրացնելու եռանդուն միջոցների համար. 5) Գիւղատնտեսական կօմունաներին, որպէս հողագործների միանդամայն յօժարակամ միութիւններին, օժանդակելը՝ խոշոր հանրային տնտեսութիւն վարելու համար:

Նկատելով այս բոլոր միջոցները, որպէս միակ ճանապարհը՝ դէպի հողագործական աշխատանքի արտադրողականութեան բացարձակ անհրաժեշտ բարձրացումը, Ռուսաստանի Կօմունիստական Կուսակցութիւնը ձգտում է հնարաւոր չափով աւելի լիովին կեանքի մէջ անցկացնել այս միջոցները, աւարածել դրանք երկրի աւելի լեռմնաց շրջաններում և այդ ուղղութեամբ լետագա քայլերը անել:

Ռուս. կօմուն. Կուս.-ը առանձնապէս պնդում է.

1) Սմեն կերպ պետական աջակցութիւն ցոյց տալ գիւղատնտեսական. կօօպերացիաներին, որոնք զբաղւած են գիւղատնտեսութեան պրօդուկտների վերամշակմամբ.

2) Լայն չափով անցկացնել մէլիօրացիաների սխտէմը.

3) Պրօկատային պունկտների միջոցով լայնօրէն ու համաչափ իմէնտար մատակարարել չքաւոր և միջին գիւղացիութեանը:

Հաշի առնելով այն, որ մանր գեղջիկական տնտեսութիւնը դեռ երկար պիտի գոյութիւն ունենա, Ռուս. Կօմ. Կուս.-ը ձգտում է անցկացնել մի շարք միջոցներ, որոնց նպատակն է բարձրացնել գեղջիկական տնտեսութիւնների արտադրողականութիւնը: Այդպիսի միջոցներ հանդիսանում են. 1) գիւղացիների հողից օգտւելու կարգաւորումը (միջշերտային, երկարահող և այլնի վերացումը). 2) գիւղացիներին ազնւասերմ հատիկների և արւեստական պարարտացման նիւթերի մատակարարու-

մր. 3) գիւղացիական անառուներին ցեղի ազնւացումը. 4) ագրոնոմիական գիտելիքների տարածումը. 5) գիւղացիներին ագրոնոմիական աշակցութիւն ցոյց տալը. 6) գիւղատնտեսական գիւղացիական ինվէնտարի նորոգումը խորհրդային բէմօնտների արհեստանոցներում. 7) պրօկատային պոնկտների, փորձնական կայանների, ցուցադրատների և այլնի կազմակերպումը. 8) գիւղացիական հողերի մէլիօրացիան:

11. Ի նկատի ունենալով, որ գիւղի և քաղաքի միջև հակադրութիւնը՝ հանդիսանում է գիւղի տնտեսական և կուլտուրական լետամնացութեան ամենախոր հիմքերից մէկը, իսկ այնպիսի խոր ճգնաժամի էպօխայում, ինչպէս այժմանը, թէ քաղաքը և թէ գիւղը գնում է ալլաօսեւման և կործանումի անմիջական վտանգի առաջ, Ռուս. Կօմ. Կուս.-ը այդ հակադրութեան ոչնչացման մէջ տեսնում է կօմունիստական շինարարութեան արմատական խնդիրներից մինը և ընդհանուր միջոցների հետ մէկտեղ համարում է անհրաժեշտ արդիւնադրժական բանւորներին լայնօրէն ու համաչափ մասնակից անել կօմունիստական շինարարութեանը հողագործութեան մէջ, այդ նպատակներով Խորհրդային իշխանութեան կողմից արդէն հաստատուած համապետական «Օժանդակութեան Բանւորական Կոմիտէի» գործունէութիւնը զարգացնել և այլն:

12. Իր ամբողջ աշխատանքի մէջ գիւղում Ռուս. Կօմ. Կուս.-ը առաջաւ պէս յենում է նրա պրօլէտարական ու կիսապրօլէտարական խաւերի վրա, կազմակերպում է նրանց, ամենից առաջ, որպէս ուրոյն ոյժ, ստեղծելով գիւղում կօսակցական եւձէյկաներ, չքաւորների կազմակերպութիւններ, գիւղի պրօլէտարների և կիսա-պրօլէտարների առանձին տիպի պրօֆէսիօնալ միութիւններ և այլն, ամեն կերպ մօտեցնելով նրանց քաղաքային պրօլէտարիատի հետ և դուրս քաշելով նրանց գիւղական բուրժուազիայի և մանր-սեփականատիրական շահերի ազդեցութեան տակից:

Կուլակների, գիւղական բուրժուազիայի վերաբերմամբ, Ռուս. Կօմ. Կուսակցութեան քաղաքականութիւնը կայանում է նրանց հարստահարչական կեղտոտ ձգտումների դէմ վճռա-

կան կուլի մէջ, խորհրդային իշխանութեանը ցոյց տաւ նրանց դիմադրութիւնը ճնշելու մէջ:

Միջին գիւղացիութեան վերաբերմամբ Ռուսաստանի Կօմունիստական կուսակցութեան քաղաքականութիւնը կայանում է՝ աստիճանաբար և պլանմէր մասնակից անել նրան սօցիալիստական շինարարութեան աշխատանքի մէջ: Կուսակցութիւնը իրեն նպատակ է դնում՝ բաժանել նրան կուլակներից, գրաւել նրան բանւոր դասակարգի կողմը՝ ուշադիր վերաբերմունքով դէպի նրա կարիքները, կուլելով նրա լետամնացութեան դէմ իդէական ազդեցութեան միջոցներով, և բնաւ ոչ թէ ճնշելու միջոցներով, ձգտելով այն բոլոր դէպքերում, երբ շօշափուում են նրա կենսական շահերը, գործնական համաձայնութեան գալ նրա հետ, զիջումներ անելով նրան՝ սօցիալիստական վերակերպարանաւորումները անցկացնելու եղանակները որոշելու մէջ:

ԲԱՇԽՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

13. Բաշխման շրջանում Խորհրդային իշխանութեան առաջադրւած խնդիրը ներակայումս կայանում է նրանում, որ անշեղ կերպով շարունակի առեւտրի փոխարինումը համապետական մասշտաբով կազմակերպւած, մթերքների համաչափ բաշխումով: Նպատակ է հանդիսանում ամբողջ ազգաբնակչութիւնը կազմակերպել սպառողական կօմունաների մէկ ամբողջական ցանցի մէջ, կօմունաների, որոնք ընդունակ են ամենամեծ արագութիւնով, համաչափութեամբ, խնայողութիւնով, և աշխատանքի նւագագոյն վատնումով, բաշխել բոլոր անհրաժեշտ մթերքները, խստօրէն կէնտրօնացնելով բաշխման ամբողջ ապարատը:

Սպառողական կօմունաներին և նրանց միութիւններին որպէս հիմք պէտք է դնել գոյութիւն ունեցող համաքաղաքացիական բանւորական կօօպէրացիան, որը հանդիսանում է սպառողների ամենախոշոր կազմակերպութիւնը և կապիտալիզմի պատմութիւնով ամենից շատ պատրաստուած մասսայական բաշխման ապարատը:

Սկզբունքորէն միակ ուղիղը համարելով կօօպէրատիվ ապարատի այդ ձևի յետագա կօմունիստական զարգացումը, և ոչ թէ նրան մի կողմ նետելը, Ռուս. Կօմ. Կուս.-ը սխտեմատիկ կերպով պէտք է շարունակի իր քաղաքականութիւնը.— պարտաւորեցնել կուսակցութեան բոլոր անդամներին աշխատելու կօօպէրատիվների մէջ, պրօֆէսիօնալ միութիւնների օգնութեամբ նոյնպէս՝ ղեկավարել նրանց կօմունիստական ոգով, կօօպէրատիվների մէջ միացած աշխատաւոր ազգաբնակչութեան ինքնագործունէութիւնն ու դիսցիպլինան զարգացնել, ջանալ, որ կօօպէրատիվներն ընդգրկեն իրենց մէջ ամբողջ ազգաբնակչութիւնը և որ այդ կօօպէրատիվները ձուլւին, վերից մինչև վար, ամբողջ Խորհրդային Հանրապետութիւնն ընդգրկող, մէկ ամբողջական կօօպէրատիվի մէջ, վերջապէս, և որ ամենազխաւորն է, մշտապէս ապահոված լինի պրօլէտարիատի դերակշիռ ազդեցութիւնը աշխատաւորների մնացած խաւերի վրա և ամենուրեք գործնական կեանքում փորձի առնւելին զանազան միջոցներ, որոնք հեշտացնում ու իրագործում են հին, կապիտալիստական տիպի մանր-բուրժուական կօօպէրատիվներից փոխանցումը դէպի սպառողական կօմունիստները, որ ղեկավարում են պրօլէտարներն ու կիսապրօլէտարները:

ՓՈՂԱՅԻՆ ՈՒ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՇՐՋԱՆՈՒՄ.

14. Խուսափելով Փարիզի Կօմունայի գործած սխալից, Խորհրդային իշխանութիւնը Ռուսաստանում միանգամից դրական պետական բանկը, ապա անցաւ մասնաւոր առևտրական բանկերի նացիօնալիզացիային, ձեռնարկեց ազգայնացրած բանկերի, խնայողական զանձարկողների և կապնաչէյսովօների միացմանը պետական բանկի հետ, ստեղծելով այդպէս Խորհրդային Հանրապետութեան ամբողջացած ժողովրդական բանկի կմախքը և բանկը, Ֆինանսական կապիտալի տնտեսական տիրապետութեան կենտրոնից ու շահագործողների քաղաքական տիրապետութեան գործիքից, դարձնելով որպէս բանաւորական իշխանութեան գործիք և որպէս տնտեսական լեզաշրջման խթան:

Նպատակ դնելով իրեն առաջիկայում հետեւողականորէն մինչև վերջ տանել Խորհրդային իշխանութեան սկսած աշխատանքը, Ռուս. Կօմ. Կուս.-ը առաջին հերթին առաջ է մղում հետեւեալ սկզբունքները.

1. Ամբողջ բանկային գործի մօնօպօլիզացիան Խորհրդային պետութեան ձեռքում.

2. Բանկային օպերացիաների արմատական փոփոխումն ու պարզացումը՝ բանկային ապարատը Խորհրդային Հանրապետութեան միատեսակ ուղեօտի և ընդհանուր հաշւապահութեան ապարատի վերածելով, ռւլիով: Պլանօմէր հասարակական տնտեսութեան կազմակերպման համեմատ այդ առաջ կրքերի բանկի ոչնչացումը, և այն՝ Կօմունիստական հասարակութեան կենտրոնական բուխքալուծիւթի կվերածի:

15. Կապիտալիզմից կօմունիզմին անցնելու սկզբնական շրջանում, քանի դեռ լիովին չի կազմակերպւած կօմունիստական արտադրութիւնը և մթերքների բաշխումը, փողի ոչնչացումը զառնում է անհնար: Այսպիսի գրութեան մէջ ազգաբնակչութեան բուրժուական էլէմէնտները շարունակում են որպէս մասնաւոր սեփականութիւն մնացած դրամները օգտագործել օպէկուլենցիայի, շահելու և աշխատաւորներին կողոպտելու նպատակով: Յենւելով բանկերի նացիօնալիզացիայի վրա, Ռուս. Կօմ. Կուս.-ը ձգտում է անցկացնել մի շարք միջոցներ, որոնք ընդարձակում են առանց փողի հաշւեմարումների շրջանակը և նախապատրաստում են փողի ոչնչացումը. **օրինակ՝ պարտադիր կերպով փողերը պահել ժողովրդական բանկում. բիւդճետային գրքեր մտցնել, փողերը փոխարինել չէկերով, կարծառե ուժ ունեցող տոմսերով՝ մթերքներ և այլն ստանալու իրաւունքով:**

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ.

16. Կապիտալիստներից էկսպրօպրացիայի ենթարկւած արտադրութեան միջոցների սխւած համայնացումի դարաշրջանում, պետական իշխանութիւնը զաղարում է պարադի-

տական ապարատ լինելուց, արտադրական պրոցեսի վրա կանգնած. հա սկսում է դառնալ մի կազմակերպութիւն, որ անմիջականօրէն կատարում է երկրի էկոնոմիկան հառաւիարելու ֆունկցիաները, և այդ չափով էլ պետական բիւջէտը դառնում է ամբողջ ժողովրդական տնտեսութեան բիւջէտը իր ամբողջութեամբ:

Այս պայմաններում եկամուտների և ծախսերի հաշուէշխուք իրագործելի է պետական պլանումէր արտադրութեան և մթերքների բաշխման ուղիղ կազմակերպումով միայն: Իսկ ինչ որ վերաբերում է անմիջական պետական ծախսերի ծածկելուն փոխանցման դարաշրջանում, ապա Ռուս. Կօմ. Կուս. բ պաշտպանելու է կապիտալիստներից կօնտրիբուցիա առնող սխտէմից դէպի պրոգրէսիվ եկամտային և գոյքային հարկի փոխանցումը, ա՛յն սխտէմից, որը պատմականօրէն անհրաժեշտ և օրինական էր սօցիալիստական լեղափոխութեան առաջին օրերում: Իսկ որ չափով որ այդ հարկը վերանում է ինքն իրեն՝ ունենոր դասակարգերի վերաբերմամբ լայն չափով գործադրած էկսպրօպրիացիայի շնորհիւ, - պետական ծախքերի ծածկելը պէտք է հիմնւի նրա վրա, որ ալլեալլ պետական մօնօպօլիաներից ստացւած եկամուտի մի մասը անմիջականօրէն պետութեան եկամուտ դարձնւի:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՇՐՋԱՆԱԻՄ.

17. Ձգաելով լուծել բնակարանային հարցը, որ առանձնապէս սրել է պատերազմի ընթացքում, Խորհրդային իշխանութիւնը լիովին էկսպրօպրիացիայի ենթարկեց կապիտալիստական տնտեսների բոլոր տները և յանձնեց քաղաքային խորհուրդներին. արւարձաններից բանւորներին մասսաներով տեղափոխեց ու տեղաւորեց բուրժւական տների մէջ. դրանցից լաւագոյնները յանձնեց բանւորական կազմակերպութիւններին, այդ շինութիւնների պահպանութիւնն ընդունելով պետութեան հաշին. ձեռնարկեց բանւորական ընտանիքները կահաւորութիւնով ապահովելու և ալլն:

Ռուսաստանի Կօմունիստական Կուսակցութեան առաջադրած խնդիրը կայանում է նրանում, որ, ընթանալով վերոլիշեալ ուղիով և բնաւ չջողալով ոչ-կապիտալիստական տնտեսութեան շահերը, բոլոր ուժերով ձգտում է՝ բարելաւել աշխատաւոր մասսաների բնակարանային պայմանները, ոչնչացնել հին կփարտայների կուտակւելն ու հակասանի տարական պայմանները, քանդել անպէտք բնակարանները, վերանորոգել հները, կառուցել նորերը, որոնք համապատասխանում են բանւորական մասսաների կեանքի նոր պայմաններին, տեղաւորել աշխատաւորներին բացիօնալ կերպով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ.

Պրօլետարիատի դիկտատուրայի հաստատումով առաջին անգամ հնարաւորութիւն ստեղծւեց լիովին իրագործելու սօցիալիստական կուսակցութիւնների միեմում-ժրագիրը աշխատանքի պաշտպանութեան շրջանում:

Խորհրդային իշխանութիւնը օրէնսգրական եղանակով անց է կացրել և «Աշխատանքի համար Սրէնքների Կօդէքսում» հաստատել. — Ութ ժամւա բանւորական օր բոլոր աշխատաւորների համար, որպէս մաքսիմալ աշխատաժամ. միաժամանակ 18 տարեկանից ցած հասակ ունեցողների համար արտադրութեան առանձնապէս վնասակար ճիւղերում, և նմանապէս գետնի տակ աշխատող լեռնարդիւնաբերական բանւորների համար բանւորական օրը 6 ժամից աւելի չպէտք է լինի. շարաթական 42-ժամւա անընդհատ հանգիստ բոլոր աշխատաւորներների համար. որոշւած ժամանակից դուրս աշխատանքը արգելել, որպէս ընդհանուր կանոն. մանուկների և մինչև 16 տարեկան դեռահասների աշխատանքից օգտւելը արգելել. գիշերային աշխատանքը և առանձնապէս վնասակար ճիւղերում աշխատելը, և նմանապէս առանձնաժամանակից դուրս աշխատանքը արգելել՝ բոլոր իգական սեռի անձանց և

արական սեռի անձնաւորութիւնների համար, որոնք չեն լրացրել 18 տարեկան հասակը. կանանց ազատել աշխատանքներից 8 շաբաթւա ընթացքում մինչև ծննդաբերութիւնը և 8 շաբաթւա ընթացքում ծննդաբերութիւնից յետո, պահպանելով լրիւ աշխատավարձ այս ամբողջ ժամանակամիջոցում՝ օրի բրժկական և դեղերով օգնութիւն ցոյց տալով հանդերձ և բանւորուհիներին հնարաւորութիւն տալով ամեն մի երեք ժամից յետո կերակրել երեխային ոչ պակաս կէս ժամից և սննդատու մայրերին տալով լրացուցիչ նպաստ. աշխատանքի ինսպէկցիան և սանիտարական ինսպէկցիան, որ ընտրւում է արհեստակցական միութիւնների խորհուրդների կողմից:

Խորհրդային իշխանութիւնը օրէնսդրական եղանակով անց է կացրել ուրիշ աշխատանքը չշահագործող բոլոր աշխատաւորների սօցիալական ապահովութիւնը, աշխատելու ընդունակութիւնը կորցնելու բոլոր տեսակներից և առաջին անգամը աշխարհում՝ անգործութիւնից վարձողների և պետութեան հաշւին, ապահովողների լիակատար ինքնավարութեամբ հանդերձ և պրօֆէսիօնալ միութիւնների լայն մասնակցութիւնով:

Դեռ աւելին ևս, Խորհրդային իշխանութիւնը մի քանի պայմաններում աւելի հեռուն է անցել մինիմում ծրագրից և հէնց նոյն «Աշխատանքի համար Օրէնքների Կօդէքսում» սահմանել է բանւորական կազմակերպութիւնների մասնակցութիւնը՝ վարձելու և հեռացնելու խնդիրները վճելու մէջ, մի ամսւայ արժակուրդ, ոտնիկը պահպանելով, բոլոր աշխատաւորների համար, որոնք անընդհատ աշխատել են մի տարուց ոչ պակաս, աշխատավարձի պետական կարգաւորումը տարիֆի հիման վրայ, որ մշակել են պրօֆէսիօնալ միութիւնները, որոշ օրգաններ, յատկապէս բանւորական ուժը բաշխելու և հաշի առնելու բաժանմունքներ խորհուրդներին ու արհեստակցական միութիւններին կից, որ պարտաւոր են անգործներին աշխատանք տալ:

Սակայն այն ծայրահեղ աւերածութիւնը, որ առաջ է բերել պատերազմը, և համաշխարհային իմպերիալիզմի զրօհր ստիպեցին խորհրդային իշխանութեանը հեռանալ շեղումների

անկի.—բացառիկ դէպքերում թոյլատրել սահմանած ժամանակից դուրս աշխատանքների կիրառումը, սահմանափակելով դրանք տարւա մէջ 50 օրով. թոյլ տալ 14-ից մինչև 16 տարեկան դեռահասների աշխատանքը, սահմանափակելով նրանց բանւորական օրը 4 ժամով. ժամանակաւորապէս 1 ամսւա արձակուրդի փոխարէն տալ երկու շաբաթւա. երկարացնել դիշերային աշխատանքների տեղականութիւնը մինչև 7 ժամ:

Ռուս. Կօմ. Կուս.ը պէտք է լայն «ափով պրօպագանդա մղի իրենց իսկ աշխատաւորների ակտիւ մասնակցութեան օգտին՝ ձեռնարկած բոլոր միջոցները եռանդուն կերպով իրականացնելու աշխատանքի պաշտպանութեան շրջանում, որի համար անհրաժեշտ է.

1. Ուժեղացնել աշխատանքի ինսպէկցիան կազմակերպելու և ընդարձակելու գործը՝ հէնց իրենց բանւորական միջավայրից այդ նպատակի համար ակտիւ աշխատողներ ընտրելու և պատրաստելու ուղիով և տարածելու այն մանր ու տնային արդիւնաբերութեան վրա:

2. Աշխատանքի պաշտպանութիւնը տարածել աշխատանքի բոլոր տեսակների վրա (շինարարական բանւորների, ցամաքա-ջրային տրանսպօրտի, սպասաւորների և գիւղատնտեսական բանւորների):

3. Վերջնականապէս զօրծերից հանել մանկահասակներին և անցկացնել բանւորական օրի յետադալ կրճատումը դեռահասների համար:

Սրանից զատ, Ռուս. Կօմ. Կուս.ը պէտք է իրեն նպատակ դնի սահմանել.

1) Յետադալում, աշխատանքի արտադրողականութեան ընդհանուր բարձրացման հետ, մաքսիմալ 6 ժամւա բանւորական օր՝ առանց աշխատավարձը պակասեցնելու և աշխատաւորներին պարտաւորեցնելով՝ դրանից դուրս երկու ժամ չատկացնել առանց որևէ յատուկ վարձատրութեան արհեստի և արտադրութեան թէօրիային պետութիւնը կառավարելու տէխնիկական պրակտիկ կերպով սովորելուն և դիւորական արւեստին:

2) Մտցնել վարձատրութեան խրախուսող սխեմներ՝ աշխատանքի արտադրողականութիւնը բարձրացնելու համար:

Սօցիալական եւ պահովութեան իսկ շրջանում Ռուս. Կոմ. Կուս. ր ձգտում է կազմակերպել լայն պետական օգնութիւն ոչ միայն պատերազմի և տարերային արհաւիրքների զոհերի համար, այլ և հասարակական յարաբերութիւնների աննորմալ յատկութիւնների զոհերի համար. մղում է վնասական կոխադարձութիւնների ու ձրիակերութեան ամեն տեսակի դէմ և իրեն նպատակ է դնում աշխատանքային կեանքի վերադարձնել իւլաքանձութիւն, որ դուրս է մղւած աշխատանքային ուղիքից:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ.

Ժողովրդական առողջապահութեան ասպարիզում, որպէս հիմք իր զործունէութեան, Ռուս. Կոմ. Կուս. ր ենթադրում է ամենից առաջ անցկացնել լայն առողջապահական և սանիտարական միջոցներ, որոնք նպատակ ունին հիւանդութիւնների զարգացման առաջն առնել: Որովտարիաթի դիկաաաուրան արդէն տւել է հնարաւորութիւն կեանքի մէջ մտցնելու մի ամբողջ շարք առողջարար ու բուժիչ միջոցներ, որոնք անիրագործելի են բուրժւական հասարակութեան շրջանակներում. դեղագործութեան, խոշոր մասնաւոր-մեծնարկողական բուժարանների, կուրորտների նացիօնալիզացիան, բժշկական աշխատող մեծքերի պարտադիր աշխատանքը և այլն:

Սրան համապատասխան Ռուս. Կոմ. Կուս. ր իրեն մօտաւոր նպատակ է դնում.

1) Վնասկանօրէն իրագործել լայն սանիտարական միջոցներ աշխատաւորների օգտին, այսպէս օրինակ.

ա) Բնակեցրւած վայրերը առողջացնել (հողի, ջրի և օդի խնամատարութիւն).

բ) Հասարակական սննդաւութիւնը կազմակերպել դիտական-առողջապահական հիմունքներով.

գ) Վարակիչ հիւանդութիւնների զարգանալու և տարածւելու առաջն առնելու համար միջոցներ կազմակերպել.

դ) Սանիտարական օրէնսդրութիւն հաստատել.

2) Կուս. մղել սօցիալական հիւանդութիւնների դէմ (տուբերկուլեօզի, վէնէրիկոմի, ալկօհոլականութեան և այլն):

3) Ապահովել հանրամատչելի, ձրի և զուտ-մասնագիտօրէն բուժական ու դեղերով օգնութիւնը:



Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mostly illegible due to fading and the texture of the paper.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mostly illegible due to fading and the texture of the paper.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mostly illegible due to fading and the texture of the paper.



ՀՀ Ազգային գրադարան

NL0184104

